

5678

3290

3290

Ա. ՆԱՄԱԿԻՆ

# ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ

(ԿԵՐՆՔԻ ԳԾԵՐ)

(Արտադրության ԱՄԱԼԻՔ Ամենալից)

Թ Ի Ֆ Լ Ի Ո  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԲԵՐԵԱՅԵՑ

1891

Ա. ԿԱՄԱԼԵԱՆ

Վ 4395

ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՄԻ

(ԿԵՍԱՆՔԻ ԳՅԵԲ)

5628

(Արտաստանած «ՄՈՒՐՃ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-08ԻՆԵԱՆՑԻ

1891



## ՄԵՐԻ ԻՆՉՅՈՒ ԿԸ ՊԱԿՍԻ

### I

Գիւղացի Սողոմոնը խելքը գլխին, բայց փոքր  
ինչ թարս բնութեան տէր և ժլատ մարդ էր: Նորա  
հարևանները նորա հետ զործ բանելու ց իսպառ ձան-  
ձրանում էին:

Ինչ մի գիւղական ընդհանուր զործ սկսելու լի-  
նէին, ամենքը գիտէին, որ Սողոմոնի հետ երկար  
խօսակցութիւն պէտք է ունենացին: Նորան համոզել  
անկարելի էր, որովհետեւ նա չէր ուզում համոզւել:  
Լսում էր, լսում ասողին, համոզողին և վերջումը  
էլի իւր ասածը կրկնում:

Գիւղացիները էին մոռանում նորա վարժունքը,  
գիւղում մի առու դուրս բերելու ժամանակ: Առուն  
շատ հարկաւոր էր գիւղի համար, որովհետեւ ամառ-  
ւայ կէսին արտերը չորանում էին և ջրի պահասու-  
թիւն էր զգացւում: Սողոմոնը առու դուրս բերելուն  
արդելքներ էր գնում: զործը ծանրացնում էր, ձեռ-  
նարկութիւնը վաղաժամ՝ էր անւանում, վարպետե-  
րին չէր հաւանում: Նորա վարձատրութեան զինը գիւղի  
համար անկարելի էր համարում և վերջապէս հէնց

Дозв. ценз. Тифлисъ. 3 Сентября, 1891 г.

Типогр. М. Д. Ротиніанца, на Голов. пр. соб. д. № 41

առւի կարեորութիւնը համարեա չէր լնդունում։ Խսկ երբ զիւղացիները չը լսեցին, իրանց ուղածը արեցին, առուն գուրս բերին և ջուրը սկսեց առատ հոսել դէպ արտերը, Սողոմննը ամենից շատ աղմուկ հանովներիցը գուրս եկաւ. սկսեց գանգառել, որ իրան ջուր քիչ է հասնում, որ նորա հարեանները ջուր են գողանում նորանից...

Սողոմնին սրտանց յարգում չին նորա հարեանները. բացց նորանից մի տեսակ քաշւում էին, որով հետեւ նա զիակը ամեն զործում մի բան խառնել։ Նորա հասակակիցները իրանց վրէժը նորանից առնում էին՝ ժամանակին այս ու այն դէպքում նորան շարչաբերզ կամ երբեմն, որչափ կարելին էր, նորա հետ հանաք ծիծաղի դցելով։

Սողոմնը այժմ փոխած է և բոլորովին ուրիշ մարդ է զարձել։ Նորա կեանքում մի դէպք պատահեց, որ նորա վերան շատ էր ազգել։ Ես իմ պատմութիւնս մի քիչ հեռաց եմ սկսում։

Սողոմնը փոքր ինչ շինութիւն ունէր անելու. պէտք է մեծացնէր գոմը։ Բոլոր հարկաւոր գործիքները ունէր, բացի թիակից։ Դեռ աշնանը նա պէտք էր զգացել նոր թիակի։ բացց չէր գնել, որովհետեւ թիակ ծախող Վարդանը նորա սրտին դիպել էր։ Վարդանի հետ նորա վէճը միշտ եղել է ու եղել զեօն վազ երիասարգութիւնից և նա նորան չի զիջել երբէք։ Վարդանն էլ հանաքով թէ անհանաք Սողոմնին նեղացնում էր։ Վարդանը աշնան իւր Բօրչալու գնա-

ցած ժամանակը գնում է մի յիսուն հատ թիակ և բերում իրանց զիւղը ծախելու։ Գիւղացիները գալիս են, սկսում գնել։ գալիս է Վարդանի մօտ և Սողոմնը։

— Վարդան ջան, թիակ ունի՞ս։

— Ունիմ, Սողոմնին ջան, տես, աչքիդ առաջին է։

— Քանիսո՞վ ես տալիս։

— Քեզ երեսուն կոպէկով, ասում է Վարդանը, առանձին կերպով շեշտելով քեզի վերաց։

— Խսկ ու րիշներին քանիսո՞վ, մի տեսակ զարմանքով հարցնում է Սողոմնը, առաջուց տեղեկութիւն ունենալով գնի մասին։

— Ուրիշներին երեսուն կոպէկ։

— Մի՞թէ միւնոցնը չէ, հարցնում է շարած Սողոմնը։

— Ինչպէս զիտես, պատասխանում է սառն կերպով Վարդանը։

Այդակ Սողոմնը հասկանում է ծաղրը, բարկանում է սրտումը. բացց որպէս զի իւր պարտութիւնը ցոյց չը տայ, ասում է Վարդանին կիսահանաքով։

— Մակուի խանը եթէ իմանար, թէ քեզ պէս սուր խօսացող մարդ կայ, հազարներ չէր ինսպիլ, քեզ իրա մօտ կը կանչէր ծառացութեան։

Սողոմնը ի հարկէ թիակ չի գնում և հին թիակով մի կերպ անց է կացնում ձմեռը։

Այժմ նա իսկապէս պէտք էր զգում լաւ, նոր թիակի. նա լսեց, որ մօտակայ զիւղումը մի զիւղա-

յու մօտ ծախու թիակներ կան երեսուն հինգ կոպէկով։  
Վնաս չը կայ, մոտածում էր Սողոմննը, երեսուն  
հինգ կոպէկ կարելի է տալ, որովհետև զլիսաւոր վա-  
ճառքի ժամանակը անցել է, բայց նորան ասող  
եղաւ, որ նորա հարեան համադիւղացի Գրիգորի  
մօտ էլ կայ մի աւելորդ թի, որ կը ծախի։ Սողոմննը  
դնաց Գրիգորի մօտ։

—Գրիգոր, ծախու թիակ ունիս։

—Ծախու. ինչպէս ասեմ. մի թիակ ունիմ  
չը բանեցրած, եթէ քեզ հարկաւոր է կը ծախեմ։

—Քանիսո՞վ։

—Երկու աբասով։

—Խնչ խաբար է տօ'. գինը վեց շահի էր. դու-  
էլ վեց շահով առած կը լինես։

—Ես եղբայր առեւտուրական չեմ, ինքս էլ աշ-  
խատանք չեմ ուզում դրանից. բայց մոտածում եմ,  
որ եթէ յանկարծ հարկաւորս եկաւ, կարելի է ինքս  
քառասուն կոպէկով էլ չը գտնեմ։

—Ես քեզ համար կը ճարեմ աւելի աժան, աշ-  
խատեց հանգստացնել նորան Սողոմննը։

—Կարո՞ղ ես, հէնց հիմի ճարիր էլի։

—Մատիկ գիւղումը, Սերոբի ձեռքին մի տասն  
թիակ կայ, ծախում է երեսուն հինգով, երբ հարկա-  
ւորդ լինի կը գտնես։

—Եղբա՛յր, տեղն էլ գիտես, ~~գեղն էլ~~ Որ այդ-  
պէս է իմ թիակը ծախու չէ. ես կարծում էի դու-  
անձար ես մնացել. իմն էի քեզ զիջու մի։

II

Սողոմննը վճռեց գնալ մօտակայ գիւղը Սերոբի  
մօտ և այնտեղից գնել թիակը։ Սողոմնի կինը իմա-  
նալով որ մարդը Սերոբի մօտ է գնում կրինեց իւր  
վաղուցւայ կարիքի մասին։

—Ա մարդ, տաշտ է հարկաւոր, քանի՞ անգամ  
քեզ ասել եմ։

—Մի կերպ կառավարւիր, փող չունիմ տաշտի  
համար։

—Հարկաւոր է, քեզ ասում եմ, կաթի ժա-  
մանակը գալիս է, ամենքին էլ պէտք է, փոխ առնել  
չեմ կարող ոչովից։

—Ես քեզ համար կը գտնեմ, ծաղրով պատաս-  
խանեց Սողոմննը։

—Ե՛ս, մի խայտառակիլ մեզ թէ Աստուած  
կը սիրես. ասաց բարկանալով կինը և մոտաւ ներսի  
սենեակը։

Սողոմննը գնաց Սերոբի մօտ և գնեց թիակը  
երեսուն հինգ կոպէկով։ Տաշտի մասին նա տատան-  
ւում էր, գնի թէ չը գնի։

—Սերո՞բ, ինչ ես ասում, գնեմ թէ չը գնեմ։

—Դու ինքդ գիտես, եղբա՛յր, ես ինչ ասեմ։

—Իսին ասած հարկաւոր է։

—Դէ՞ գնիր։

—Բայց ասում եմ մի կերպ կառավարւենք։

—Ուրեմն մի գնիլ։

— Բայց չեմ էլ ուզում ուրիշին գիմելու կարօս առութիւն քաշեմ:

— Դէ մի տաշտ է, հօ մի մեծ բան չէ, գնի'ր էլի, հարկաւոր բան է, աւելորդ կը լինի, քո տանը կը մնայ, հօ չի կորչում:

— Տե՛ս Սերոբ, աշնանը թիակ չը կարողացայ դնեմ—մի կերպ կառավարւեցի, ձմեռս լուսացրի:

— Եղբա՛յր, քո բանն է, ես քո հաշիւները չեմ իմանալ, ինչպէս ուզում ես արա: Նատ էլ աղքատներիցը չես, որ ասեմ փող չունիս:

— Զէ, չեմ առնիլ, կորեց Սողոմննը:

— Դէ՛չ, մի առնիլ: Վերջապէս գիւղը մօտ է, երբ ուզենաս կարող ես դալ, կամ մարդ ուզարկել:

Սողոմննը ձեռն առաւ թիակը, տնտղեց այս ու այն կողմից, և յետոյ մի փոքր մտածմունքից յետոյ գառնալով Սերոբին ասաց:

— Թէ ասում եմ տաշոյլ հէնց առնե՞մ:

— Մի կերպ կառավարւիր էլի, բայց ծանօթ լինելով Սողոմնի բնութեանը Սերոբը քիչ մնաց որ ծիծաղը գայ Սողոմնի այդ հարցմունքից. բայց իրան զսպեց:

— Ի՞նչպէս կառավարւենք, կաթը փուելու ժամանակը գալիս է, հօ չենք կարող սերը պակսացնել մի տաշտի պատճառով. ինչքա՞ն իւղ կը կորչի. մի քանի տաշտի գին կը հանի:

— Դէ՛չ, իւղը քո տանն է մնում, հօ չի փախ-

չում, իւղը մօշնակում չը լինի, պանրի բղուղի մէջ լինի, պանիրով համեղ լինի:

— Զէ՛, չէ, Սերոբ, ասածդ հաշիւ չէ, խելքի մօտիկ բան չէ, տաշտ հարկաւոր է. ես քեզ բան եմ ասում. դեռ ով գիտէ այս տարի կաթը Աստծու ողորմութեամբ շատ էլ լինի, ես ասում եմ, որ մի քանի տաշտ առնեմ:

— Ասուած տաց, որ կաթ շատ լինի. դէ տաշտերն էլ չեն փախչում՝ առայժմ, խանութումն են. ունեմ մի քսանհինդ հատ. դեռ մոածելու ժամանակ կայ:

— Եթէ յանկարծ, փոքր ինչ երկիւղով ասաց Սողոմննը, բոլորը վերայ թափւեն ու տաշտեր տանեն:

— Երբ որ երեքը մնացած լինի, ես քեզ իմաց կը տամ:

— Զէ՛, եղբայր երկուսը հիմա հետս վեր կառնեմ. կը տանեմ, սա ինձ բաւական է:

— Դէ՛չ, ջոկիր Սողոմն, քո ձեռքովդ: Սողոմննը երկայն դէս ու դէն արաւ, մանրամասն տնդղեց տաշտերը ընտրեց երկուսը:

— Սերո՞բ:

— Ի՞նչ ես ուզում:

— Ի՞նչ խելքով եմ երկուսը առնում. կինս մէկի մասին էր խօսում. երեխ աւելի հարկաւոր չէր, որ չ'ասաց:

— Ես էլ ասում եմ, մէկը առ. միւսն էլ յետոց կ'առնես:

— Ո՞ր չմնա՞յ:

— Կաթը մածուն կը շինեա, պահորի տեղ մածուն լինի, ինչ վնաս:

— Զէ, Սերոբ. երկուսն եմ վեր առնում. վճռեցի:

— Քո կամքն է. ինչպէս սիրադ ուզում է:

Սերոբը յացնի էր իբրև վերջնական գնով վաճառք անող. ուստի նորա հետ սակարկութիւն անող չէր լինում: Գիտէր այդ և Սողոմոնը. բայց իրան հանգստացնելու համար.

— Սերօք, էլ գնի մասին չենք խօսալ. պակացնելուն պակասցրու:

— Սողոմոն, սովորութքս գիտես. ուրեմն, էլ այդ բանի մասին չը խօսանք զուր տեղը:

Սողոմոնը տւառ թիակի և երկու տաշտի գինը և հեռացաւ:

### III

Սողոմոնը ճանապարհ ընկաւ թէ չէ, սկսւեց մի սաստիկ փոթորիկ: Մի քանի ժամանակից յետոյ երկինքը բոլորովին ծածկւեց սև ամպերով և սկսեց որոտալ:

Սողոմոնը չը նայելով, որ տաք էր հագնւել, քամու սաստիկութիւնից սարսւռ զգաց: Դեռ գարնան սկիզբներն էր, նոր էր ձիւնը անհետացել երկրի վերալից, մօտակաց լեռների զլսին ձիւնի հետքերը դեռ տեսանելի էին: Օրւայ տաքութիւնը խարուսիկ էր, երբ արեւը մայր էր մանում, կամ ծածկւում էր

ամպերի ետև-իսկոյն ձմեռւայ շնորհքը երեսում էր. իսկ այժմ արեւի բացակայութեանը աւելացել էր և սուր քամին:

Եղանակի յանկարծակի փոփոխութիւնից Սողոմոնը փոքր ինչ վախեցաւ. բայց որովհետև գիւղը շատ հեռու չէր, ուստի չը կորեց յոյսը գիւղ հասնելու մինչեւ անձրեւի սկսելը: Ամպերը շարունակում էին կատաղի որոտալ. ամպերի թանձրութիւնից օրը այնպէս մօնեց, որ արդէն երեկոյ էր գարձել: Սողոմոնին այնպէս թւեց, որ արդէն անձրեւի կաթիլները գիւղում էին երեսին. բայց որովհետև շատ էր տաքացել արագ գնալուց և իւր բեռնից, ուստի չէր կարողանում իսկութիւնը իմանալ:

Ահա անձրեւի կաթիլները մեծացան և թւով բազմացան: Գիւղը գեռ հեռու է, պէտք է պատըսպարելու տեղ գտնել: Սողոմոնը մոտածեց, որ իւր տուածին երևացող ճանապարհից դուրս փոքրիկ բլուրը կարող է յարմար տեղ յարմարել, որովհետև բլուրի գլխին մի ժայռ էր դուրս պրճած, որի տակ փոքր ինչ գոգածեւ տարածութիւն կար: Բայց անձրեւը գեռ սաստիկ չէր և Սողոմոնը յոյս ունէր առանց կանգ առնելու գիւղ մօնել. ուստի ճանապարհից չը շեղւեց: Բարեբազդաբոր անձրեւ հանդարտեց և Սողոմոնի յոյսը վերանորոգեց:

Կարճ միջոցից յետոյ սակացն սկսեց ձիւնի սպիտակ կորկոտ թափեւ երկնքից. մի քանի վայրին անհ կորկոտը փոխարկեց սաստիկ կարկուտի, որի հա-

տիկները քանի գնացին աւելացան։ Սողոմնը սկսեց սարսափել, ուսները ուղղեց դէպի բլուրը, բայց կարկուտը այնպէս սասափիկ սկսեց նորան թակել, որ նա բոլորովին շւարեց։ Տաշտերը զրել էր գլխին և ձեռքերով պահել։ Կարկուտը մեծ ուժով թափւում էր տաշտի վերայ մի գորհուրելի գոռոցով և կոտրասում էր Սողոմնի մատները։ Մէկ մասձեց բաց թողնել տաշտերը որպէս զի ձեռքերը ազատի կարկուտի ծեծից։ միւս կողմից տեսաւ, որ բլուրը արդէն մօտ էր։ Աչա, աչա, քիչ է մնում, որ ձեռքերը բաց լնինեն։ Մի քանի քայլ և նա բլուրի մօտն է։ Աչա և յոյսը, որին նա ապաւինել էր. յանկարծ նորա աչքին երեաց կայծակի մի մեծ հրեղէն շերտ, որ երկնքից գեսի նա ուղղւեց, կարծես անցնելով նորա խորքը։ Սաստիկ սարսափից նա ձեռքերը բաց թողեց և ընկաւ ժայռի ոտքը։ Մի քանի վայրիւանից յետոց լսւեց մի խլացնող պայթիւն, որից յետոց Սողոմնը ինքն իրան մեռած էր համարում։

Սողոմնի ականջը խլացել էր և նա ոչինչ չէր լսում։ նա ինքն իրան հարց էր տալիս. մեռած է թէ կենդանի և դեռ չէր կարողանում զնուել։

— Տէ՛ր Աստուած, զու ինձ օգնիր, մաքումը արտասանեց նա։ Դու ինձ ոտքի կանգնեցրու. իմ տունը մի քանդիլ. Սուրբ Գէորգ, քեզ երեք ու եմ խոստանում։

Սողոմնին այնպէս թւեց, թէ աւելի ևս թու-

լանում է. նա աշխատեց խաչակնքել, բայց տեսաւ, որ ձեռքը չի շարժւում։

— Ո՞վ Երկնացին, ինձ մի կորցնիլ, իւր անձն ինձ պարզեիր, կը տամ քեզ ինչ կարող եմ. մի երինչ էլ քեզ մասադ։

Անցան մի քանի րոստէներ. Սողոմնի խլութիւնը սկսեց անհետանալ, նա սկսեց որոշել անձրեի ձայնը և քաջալերւեց։ Սկսեց աւելի համարձակ կերպով շարժել մարմնի անդամները և տեսաւ որ կարողանում է շարժել։ Նորա միտքը չէր եկել մինչև այդ ժամանակը աչքերը բացանել. այժմ նա փորձեց աչքերը բանալու և ապրելու յոյսը վերադարձաւ բոլորովին։ Նա վճռեց վերկենալ։

Այժմ նկատեց նա, որ նա լնկած է քարերի վերայ, որոնց ներքին մասը արդէն ջրի մէջ էր։ Նայեց շուրջը—տեսաւ, որ կարկուտը գադարել է և գալիս է մանր անձրեւ։ Տաշտերը և թիակը չէին երեւմ։ Նա ցնցւեց. աշխատեց մարերել թէ երբ է նրանց ձեռքից թողել և մերձաւորապէս մարերենց։ Ոտքի կանգնեց և տեսաւ որ տաշտի մէկը բոլորովին, իսկ թիակի մի փոքրիկ կոսորը, կայծակից վշացել են և ընկել նորանից մի տասն քայլ չեսու։ Անջևա մնացած տաշտը ուղիղ դրւած էր գետնին, կարծես մէկը կամաւ նորան դրած լինի այնտեղ և լքցւել էր ջրով։

Սողոմնը մօտեցաւ թիակին, որ վեր առնի, տեսաւ որ մատները փետացած են և չեն կարողա-

նում բռնել. ակսեց փոքր ինչ հարել մասները և հասաւ նպատակին:

Անձրեւ գաղաքեց: Սողոմնը առաւ թիակը և տաշը և ճանապարհ ընկաւ գիւղ, ուր նորա կինը անհամբեր և երկիմտ սպասում էր նորան: Սողոմնը երկար ուինչ չը կարողացաւ պատմել կնոջը, շորերը փոխեց, երկու կում օդի կուլ տւեց և պառկեց քնելու:

#### IV

Սողոմնը չը յայտնեց իւր կնոջը միւս տաշտի գնելը և նորանից զրկւելը: Նա ծածկեց նոյնպէս իւր խոստացած մատաղների անունը. խուլ կերպով միայն ասաց որ նորա կեանքը լտանգի մէջ էր և նա սրտումը ուխտեց մի որ և է մատաղ անել:

Կինը կը մոռանար մատաղի մասին նորա ասածը, եթէ ամեն բան այնուհետև գնար առաջւայ կարգով: Նա տեսաւ որ Սողոմնը ինչ որ այդ օրւանից չի դրատում, մէկ-մէկ ջերմացնում է և մի տեսակ տիրութիւն է զգում: Վերջապէս նա մի երեկոց դիմեց Սողոմնին:

—Ա՛ մարդ, ի՞նչ է եղել քեզ. մէկ հասկացող մարդու ցոյց տուր քեզ:

—Ի՞նչ հիւանդութիւն ունեմ, որ ինչ ցոյց տամ: Որ ցաւ էլ ունենայի, ում պէտք է ցոյց տայի:

—Մի ուխտ գնա, մի մատաղ արա:

Սողոմնը ցնցւեց. նորա իսկապէս բոլոր մասած մունքը մատաղն էր. բայց չէր վճռում ինքը իւր

նախաձեռնութիւնով իրագործել այդ բանը: Կնոջ առաջարկութեանը նա շատ ուրախացաւ:

—Հա՛, մատաղ, հասկանում եմ. բայց մատաղ արած ժամանակը պէտք է կարգին բան անենք, որ թէ վերև ընդունելի լինի, թէ ինքներս էլ տեսնենք, որ մեզնից մի բան կտրել ենք:

Կինը զարմացաւ իւր մարդու այդպէս հեշտ համաձյնելուն վերայ և սկզբումը կարծեց թէ նա հանաք է անում, ուստի չը հաւատալով նորա ասածին նկատեց:

—Մատաղը-մատաղ է, միան թէ նա ջերմեանդ սրտից լինի:

—Զէ՛, կնիկ, եթէ շատ ես ջերմեանդ, քեզանից մի բան աւելի կտրիբ. ա'յ դա կը լինի իսկապէս մատաղ:

Կինը նայեց Սողոմնի երեսին և տեսնելով, որ նա բոլորովին լուրջ է խօսում, շատ ուրախացաւ: Նա շատ անգամ մոածել էր մատաղների մասին և լռել. նա մի քանի անգամ ծածուկ իւղ, բուրդ ու ցորեն էր բաժին հանել Աստուածածնի պատկերի համար և չէր յայտնել մարդուն. այժմ նա լսելով Սողոմնի խօսքերը մի ցնծութեան մէջ էր:

—Ես ասում եմ մատաղ անենք մեր... ասաց Սողոմնը ու կանգնեց. ա' կնիկ, որ ասեմ չէ՞ս զարմանալ:

—Ի՞նչ որ սրտումդ տուն է տել, պէտք է տաս, որ...

—Ես էլ հէնց այդ եմ ասում է:

Ասուած ընդունելի անի, մեռնենք նորա զօրութիւնին:

Ես ասում եմ մատաղ անեմ մեր կարմիր երինջը:

Կարմիր երինջը. Հարցրեց զարմանքով կինը:

Ի՞նչ է, մեղքդ է՞ գալիս, ինալում ես ի հարկէ խնացելու է, բայց իսկական մատաղն էլ հէնց այս տեսակն է:

Կինը լոեց. Նա չէր սպասում իւր մարդուց այդ տեսակ զոհ։ Կարմիր երինջը սիրելի կինդանի էր, մեծամարմին, գեր, գեղեցիկ։ Կինը չէր հաւատում իւր մարդուն, լաւ տեսնում էր, որ մի փոփոխութիւն է կատարել իւր մարդու մէջ։

Ասում եմ Համբարձումի օրը մատաղներս անենք և յետոյ մեր զիւղական դործերին զիալէնք. շարունակում էր Սողոմոնը։

Ի հարկէ, իթէ անելու ենք, էլ ի՞նչ յետաձգենք։

— Զէ, չենք յետաձգիլ։

Սողոմոնի մատաղի ձայն ընկաւ զիւղը։ Ոչ ոք չէր սպասում Սողոմոնից ալզպիսի մեծ զոհ։ Բայց և այնպէս մատաղը կատարեց. մորթւեց և բաժանեց առատ ձեռքով։

Սողոմոնը շափառաց իւր կորուսով։ Նա զըրկւեց երնջից մի տեսակ պատրաստականութեամբ և բաւականութեամբ։ Նա կաշին էլ իրան ըլ սեփականացրեց. այլ ծախեց և դոյացած գումարը յանձնեց

Եկեղեցուն։ Նորա հարևանները, որ զարմացել էին Սողոմոնի առատաձեռնութեան վերայ, աւելի և զարմացան, երբ լսեցին հետեւեալը։

— Սողոմոն, լաւ մատաղ տւիր, հիմի կարող ես մի քանի ժամանակ նոր մատաղի մասին հոգս չ'անե. նկատեց նորան մէկը։

— Զէ, եղբայր, ես գեռ սրտիս բոլոր կարօսը չեմ հանել. ուխտա չեմ վերջացրել։

Սողոմոնը այդ ասաց առանց պարծենալու, այլ բոլորովին լուրջ և երկիւղած կերպով։

### V

Մատաղ անելուց յետոյ անցաւ մի երեք շաբաթ։ Գիւղացիները իրանց անսասունները ուղարկել էին ամարանոց։ Խոտը առատ էր, կաթը շատ։ Սողոմոնի կինը տաշտի պակասութիւն էր զգում։ Նա այժմ իրան նախասում էր, թէ նա ինչու քաշւեց իւր մարդուց և չը պատեիրեց մի քանի տաշտեր գնել։

Երբ որ Սողոմոնը շարաթ երեկոյ զիւղական գործերը վերջացնելուց յետոյ գնաց սարը կնոջ մօտ, ինքը իւր աչքով տեսաւ ամանի պակասութիւնը։

— Տաշտներս պակաս է. ի՞նչ անենք, հարցրեց նա կնոջից խորհուրդի ձեռով։

— Ի՞նչ անենք. ես ի՞նչ գիտեմ։ Ես քեզ ուզում էի ասեմ, որ Սերոբից մի քանի տաշտ առնես. բայց քաշւեցի։

— Դու չասացիր, իսկ ես մտածեցի և Սերոբից

երկու տաշտ էի գնել տուն բերելու, բայց բաղդը նորան ձեռքիցս առաւ։

— Ի՞նչ է պատահել, մինչեւ այժմ չեմ լսել քեզից։

Սողոմննը, որ մինչեւ այդ օրը չէր պատմել կոտջիւր գլխին եկածը, բոլորը մի առ մի բացեց իւր կոտջ առաջ։ Կինը լսում էր սարսափով։ Երբ որ Սողոմննը վերջացրեց իւր պատմութիւնը կինը յուղւած ձայնով ասաց։

— Ե՛հ, բան չկայ. մի կերպ կը կառավարւենք։ Մի երկու անգամ թարմ կաթից անքաշ պանիր կը պատարաստենք. մի քանի անգամ մածուն կը մերենք, կաթի համար տեղ կը բացւի։

Լսելով երեք մատաղացու ուլերի խոստումը, կինը խնայեց իւր սրտում և չը կարողացաւ ոչինչ ասել իւր մարդուն, որ կարծես սպասում էր մի որ և է նկատողութեան։

— Ես համարեա այն աշխարհքից եմ յետ դարձել, աւելացրեց Սողոմննը կարծես իրան արդարացնելու մաքով։

— Փա՛ռք Ամենակալին. ինչ որ խոստացել ես, ճիշդ կերպով կատարիր։ Մենք սուրբերի հետ վէճ մտնողներ չենք. կը տանք խոստացածներս։

Մինչեւ աշուն՝ ժամանակ շատ կար—և Սողոմննը յաճախ կանգ էր առնում իւր մտքում իւր խոստացած մատաղների վերայ. Նա ի հարկէ մատաղը մանելու էր. յետ դառնալու, չը կատարելու մասին չէր

կարող ոչ մի խօսք լինել։ Բայց նա մտածում էր այն բանի վերայ թէ առհասարակ, եթէ մարդ իրանից սկսի մի բաժին հանել եկեղեցուն, աղքատին, կարօտեալին ինչ զրկանք կունենայ, անորա ի՞նչը կը պակսի։

Այդ մտածունքները կամաց-կամաց համոզեցին նորան, որ ամեն մարդ կարող է մի զոհաբերութիւն անել-նայած իւր կարողութեան։ Սուրբ Գէորգի տօնին նա ուխտ գնաց և հեռու տեղից եկած մի վարդապետի խրատի ներկայ եղաւ։ Վարդապետը խօսում էր ոչ պատարագի ժամանակ, այլ եկեղեցու բակում, ուխտաւորների շրջանում։ Նա քարոզում էր ուսումի նշանակութեան մասին. նա ցոյց է տալիս, որ ամեն տեղ կարելի է բարի գործ կատարել, եթէ մարդիկ բարի ցանկութիւն ունենան։

Սողոմննը իւր կեանքում այդ տեսակ խրատներ շատ էր լսել. բայց երբէք նոցա նշանակութիւն չէր տեել։ Այժմ, որովհետեւ ինքը սաստիկ զբաղւած էր այդ տեսակ մոքերով, շատ խոր ուշադրութեամբ սկսեց կէտ առ կէտ հետեւել վարդապետի խօսքերին և զարմանում էր, որ վարդապետը այդպէս նուրբ կերպով լսմբունել է բոլոր խնդիրը։

Սուրբ Գէորգի տօնից գառնալուց յետոց Սողոմնի մէջ կատարած փոփոխութիւնը արդէն շատ նկատելի դարձաւ շրջապատղների համար։ Սողոմննը, որ ինքը կը փախչէր հասարակախան գործերից, որպէս զի ինքը ծախսի տակ չ'ընկնի, այժմ ինքն էր սկսել ուսում-

նարանի, կարօտեալների լնամելու, եկեղեցու շքեղութեան մասին ակնարկներ անելու: Բայց ամենից շատ նա զարմացրեց իւր կնոջը, երբ սկսեց աշոնքւայ պաշարից մաս վեր առնել բարի գործերի համար:

—Ա՛ կնիկ. այս իւղից մի քանի դրկալ չետ գնենք, այս ցորենից մի երկու չափ, այս կտաւատից այս գաւաթը, այս բրդից այս կտորի... այդ կտորներից մենք չենք աղքատանալ. բայց ուրիշն կը կը տացնենք, կը հազցնենք, կը լուսաւորենք:

Կինը, որ մինչև այժմ կատարում էր իւր մարդու նոր սկսած դերը զարմացաւ և սկսեց վախենալ. Առաջ մարդն էր նորան կանգնացնում, այժմ նա փորձեց մարդուն նկատելու:

—Մենք էլ, ա մարդ, շատ հարուստներից չենք. Անք էլ կարօտեալից մի քիչ միայն բարձր ենք:

Սողոմննը ծիծաղից և հանդիսատ կերպով ասաց.  
—Ես հիմի ինձ առելի հարուստ և բաղդաւոր եմ համարում, քան առաջ, երբ պինդ բռնած կանգնած էի բրդի վերջին թէին էլ: Բացի այդ մէկ մտածիր, ինքու պէտք է օգնես ուրիշն, որ քո նեղութեան մէջ էլ քեզ օգնեն: Այժմ մեր տւածից մեր ի՞՞նչը կը պակսի, բայց նա չի կորիլ:

Սողոմնի ուղեղը սկսել էր շարժւել այդ ուղղութեամբ. ուստի նա զարմանալի ճարտարութեամբ սկսեց բացատրել բարեգործութեան նշանակութիւնը:

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

- |                               |        |
|-------------------------------|--------|
| 1) «ՀԱՐԵՒԱՆԵՐ» . . . . .      | 3 կոտ. |
| 2) «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .     | 3 " "  |
| 3) «ԵԶԼԻՎ ԱԳՐԻԿԱԼ» . . . . .  | 5 "    |
| 4) «ՆԻԱԶԻԱԾ ԿԵՍԻՔԸ» . . . . . | 3 "    |
| 5) «ԾԱՆՐԻ ՔԱՐԲ» . . . . .     | 3 "    |

|| ՊԻՆՆ Է ՅՅ ԿՈՊ. ||

Առաջառնութեա Թիթիլիսի հայ զբավաճառահայոցներու մ  
և «Մորճա-ի խմբագրասանը» :

ԱՅ Հայագիտական գրադարան



MAL006411

